

Հ Յ Դ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի առաջին Հանրապետության անկման պատճառների մասին*

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից հետո արտերկրում հայտնված ՀՅ Դաշնակցության ղեկավար գործիչների ու շարքային անդամների շրջանում լայն քննարկման նյութ դարձան սեփական քայլերի վերագնահատման, սխալների ու բացթողումների վերհանման հարցերը: Այս առումով առանձնապես կարևորվում էր Հայաստանի Հանրապետության անկման առարկայական ու ենթակայական պատճառների բացահայտումը, ինչի հանդեպ միատեսակ չէր կուսակցության ղեկավար մարմնի՝ ՀՅԴ Բյուրոյի անդամների դիրքորոշումը:

Հայտնի է, որ 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Երևանում կայացած ՀՅ Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ ՀՅԴ Բյուրոյի անդամներ էին ընտրվել Ա. Ջամալյանը, Ս. Վրացյանը, Ս. Արարատյանը, Ա. Գյուլխանդանյանը, Ռուբենը (Մ. Տեր-Սիմասյան), Արմեն Գարոն և Հ. Օհանջանյանը, իսկ փոխանդամներ՝ Գ. Ղազարյանը, Ա. Շահմազյանը, Վ. Նավասարդյանը¹: Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդող շրջանում ՀՅԴ Բյուրոյի անդամները, համաձայն վերջինիս որոշման², հեռացան արտասահման:

Սակայն, մինչև կուսակցության հաջորդ Ընդհանուր ժողովի գումարումը՝ ՀՅԴ Բյուրոյի անդամներ Ա. Ջամալյանը, Ա. Գյուլխանդանյանը, Ս. Արարատյանը և փոխանդամներ Գ. Ղազարյանն ու Վ. Նավասարդյանը որոշեցին հրավիրել կուսակցական խորհրդաժողով (կոնֆերանս): 1921թ. ապրիլի 7-25-ին Բուխարեստում գումարված ՀՅԴ արտասահմանյան մարմինների խորհրդաժողովին, բացի ՀՅԴ Բյուրոյի թվարկված անդամներից ու փոխանդամներից, ներկա էին նաև ներկայացուցիչներ հետևյալ կառույցներից. Կ. Պոլիս՝ Հ. Ամատունի և Ա. Բարսեղյան, Վրաստան՝ Դ. Դավիթխանյան և Ա. Թորոսյան, Շիրակ՝ Պ. Լևոնյան, Ամերիկա՝ Շ. Նաթալի և Ջ. Ջատիկյան, Բալկաններ՝ Օ. Վարդանյան և Մ. Հովհաննիսյան, Կիլիկիա՝ Հ. Գրիգորյան, Եգիպտոս՝ Լ. Նազարյան, Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակություն՝ Ա. Ահարոնյան, Ինտերնացիոնալի կողմից՝ Մ. Վարանդյան, ՀՀ խորհրդարանական ֆրակցիայի կողմից՝ Ս. Խաչատրյան, խորհրդակցական ձայնով՝ Հ. Ներուզ, Ա. Խատիսյան, Վ. Առաքելյան³:

Խորհրդաժողովը քննության ենթարկեց ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին հաջորդած շրջանում կուսակցության ծավալած գործունեությունը և որոշումներ կայացրեց տարբեր հարցերի կապակցությամբ: Խորհրդաժողովն իր որոշումներում որպես ՀՀ անկախության կորստի պատճառներ մատնանշեց պետության

* Ընդունվել է տպագրության 20.07.2010:

1 Տե՛ս Ռուբեն, Գայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է., Արտասահման, Սասուն և Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 17-148:

2 Տե՛ս Գ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատասխանատու խմբագիր և կազմող՝ Վ. Ն. Ղազարխեցյան, Եր., 1999, էջ 10:

3 Տե՛ս Քիլոբճեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. Պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթենք, 1988, էջ 53: Տասնապետեան Գ., Գ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառույցի հիլովոյթը, Պէյրուս, 1985, էջ 123-124:

աննպաստ աշխարհագրական դիրքը, հարևանների հետ թշնամական հարաբերությունների մեջ գտնվելը, ֆինանսական ծանր դրությունը, Անտանտի տերությունների անտարբեր վերաբերմունքը, ռուսական բոլշևիզմի գործոնը և այլն: Այնուհետև քննադատվեց ՀՅԴ Բյուրոն՝ 1920 թ. մայիսին բոլշևիկների հակապետական շարժումները ճնշելուց հետո պետության ամրապնդմանն ուղղված համակողմանի քայլեր չձեռնարկելու համար: Խորհրդաժողովի ընդունած որոշումներում քննադատվում էր մանավանդ ՀՅԴ Բյուրոյի վերջին մեկ տարվա գործունեությունը, որի ուղղություն տվողներն էին հանդիսացել Բյուրոյի՝ խորհրդաժողովից բացակա անդամներ Հ. Օհանջանյանը, Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան) և Ս. Վրացյանը: Հետագայում վերջիններս խորհրդաժողովի որոշումները և նրա կողմից ընտրված Արտասահմանյան պատասխանատու մարմինը համարեցին անընդունելի և ուղղված իրենց դեմ:

Քննության առնելով կուսակցության համար ստեղծված նոր իրավիճակը՝ որոշումներ կայացվեցին նաև ՀՅԴ հետագա քաղաքականության վերաբերյալ: Մասնավորապես՝ որոշվեց շարունակել աշխատանքները Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածների իրագործման համար, սերտ հարաբերություններ պահպանել ռուս, վրացի, թաթար (ադրբեջանցի) և լեռնական վտարանդիների հետ: Խորհրդաժողովի որոշմամբ նախատեսվում էր նաև կապեր հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ, ինչը պատճառ դարձավ 1921 թ. հուլիսի 8-14-ի Ռիզայի բանակցությունների համար:

ՀՀ անկման պատճառների բացահայտման առումով ՀՅԴ Բուխարեստի խորհրդաժողովի տված գնահատականներն իրենց թարմությունը պահպանել են նաև մեր օրերում: Խոստովանենք, որ անցած տասնամյակներում մասնագետ պատմաբաններն այս առումով շատ բան չեն ավելացրել խորհրդաժողովի կողմից մատնանշվածներին, քանզի ՀՅԴ-ի ներսում գործող քննադատության ազատությունն ավելի քան ակնհայտ էր: Հայության համար բախտորոշ իրադարձությունների հորձանուտում և դրանց անմիջական հոգեբանական ազդեցության պայմաններում գումարված ՀՅԴ խորհրդաժողովի դիրքորոշումներն առավել քան խոսուն էին. կուսակցությունը չէր վարանում քննադատել իր բարձրագույն ղեկավար մարմնի և ղեկավար անհատների բացթողումներն ու սխալները, մատնանշել նոր իրավիճակում կուսակցության կողմից ձեռք առնվելիք քայլերը: Սա ներկուսակցական առողջ մթնոլորտի առկայության և ներքին քննադատության ազատության՝ դաշնակցական ավանդույթների հերթական վկայությունն էր: Այլ հարց է, որ նույն հիմնախնդիրների վերաբերյալ հետագայում ՀՀ վտարանդի ղեկավարության անմիջական մասնակցությամբ ընդունված որոշումները (ՀՅԴ Վիեննայի խորհրդաժողով, 10-րդ Ընդհանուր ժողով) ավելի մեղմ էին և կոշտ քննադատություններ չէին պարունակում: Թերևս սա էլ առկա տեղեկատվության ամբողջացման, իսկ հնարավոր է նաև՝ պայմանների փոփոխության արդյունք էր:


Հրապարակվող փաստաթուղթը ՀՅԴ Բուխարեստի խորհրդաժողովի որոշումների ձեռագիր տարբերակն է: Փաստաթղթի բնօրինակը պահվում է Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյանի անձնական ֆոնդում (ֆ. 1048) և բաղկացած է 12 ձեռագիր էջից: Թերևս, ՀՅԴ Բուխարեստի խորհրդաժողովի որոշումներին ծանոթանալու համար ՀՅԴ Արտասահմանյան պատասխանատու մարմնի կողմից այն ուղարկվել է Բյուրոյի անդամ Ռուբենին, ուստիև մնացել է նրա փաստաթղթերի մեջ:

Հրապարակման ընթացքում փաստաթղթի իմաստային և լեզվաոճական առանձնահատկությունները պահպանվել են բնագրային տեսքով, կատարվել են միայն կետադրական և ուղղագրական բնույթի մասնակի շտկումներ:

Համո Կ. Սուքիասյան
պատմ. գիտ. թեկնածու

THE ARF BUKHAREST CONFERENCE DECISIONS:
on the reasons of the decay of the first Republic of Armenia

Hamo K. Sukiasyan



Հ. Յ. Գ.
Արտասահման
պատասխանատու մարմին
---“---
20 մայիսի 1921թ.
N 22

Հ. Յ. Գ. կոնֆերանսի որոշումները⁴

Հ. Յ. Գ. կոնֆերանսը (խորհրդաժողովը) քացեցաւ ապրիլ 7-ին՝ մասնակցութեանը 19 ձայնատու ներկայացուցիչներու և 3 խորհրդակցական ձայնով հրաւիրածներու. Բիրօ՝ 5, Վիշապ՝ 2, Ամերիկա՝ 2, Վրաստան՝ 2, Բալկան՝ 2, Կիլիկիա՝ 1, Շիրակ՝ 1, Եգիպտոս՝ 1, Հայաստանի պարլամ. դաշնակց. ֆրակցիա՝ 1, Փարիզի պատվիրակութիւն՝ 1, ինտերնացիոնալի ներկայացուցիչ՝ 1, խորհրդակց. ձայնով՝ 3:

Ժողովն իր զբաղումներուն առարկա ըրաւ հետևեալ օրակարգը.

1. Ձեկուցումներ կենտ. կոմիտեներու և պարլամենտական ֆրակցիայի
2. Ձեկուցումն Բիրօի
3. “ մամենտի մասին
4. “ Կիլիկիոյ մասին
5. “ Փարիզի դելեգացիայի
6. Երկրէն հեռացած ընկերների վիճակի խնդիր
7. Դրամական խնդիրներ
8. Կուսակցական մամուլ և անոնց քաղաքականութեան ներդաշնակութեան անհրաժեշտութիւնը
9. Ձեկուցումն ինտերնացիոնալի մասին

4 Այս և հաջորդ ընդգծումները բնագրին են:
5 Կ. Պոլիս:

10. Արտասահմանեան Պատասխանատու Մարմնի ընտրութիւնը:

I. Կենս. կոմիտէներ.

Ըստ օրակարգի՝ ժողովն իր աշխատանքներն սկսաւ կ. կոմիտէներու գեկուցումներով: Թեև կոնֆերանսի էութենէն դուրս էին այդ գեկուցումները, սակայն անոնց վրայ նայելով իբր տեղեկատուութիւններ, որոնք կրնային կոնֆերանսին մէջ տրամ որոշ հարցերու մասին հանելիք որոշումներուն ուղղութիւն տալ, լսեցան և միտքերու փոխանակութեան ենթարկեցան:

Կ. կոմիտէներու գեկուցումներէն երևան եկաւ, որ Հայաստանի սահմաններէն ներս, կուսակցական բոլոր ուժերը լծած ըլլալով պետական աշխատանքներու, կուսակցական աշխատանքներու պէտք եղած չափով ուշադրութիւն չէ դարձած: Երկրէն դուրս, սակայն, մեր բոլոր շրջանները, բացառութեամբ Բագուն, երևան եկած են աւելի ակտիւ և ուժեղացած: Վրաստանը, որած բացառիկ պայմաններու մէջ, լարած ջիղերով տարած է կուսակցական կենդանի գործ: Բագուի մէջ Ատրբէջանի կողմէ գործ դրած հալածանքներու հետևանքով արդէն տկարացել էր մեր մարմինը, մինչև որ բուշինիկեան բեժինը եկաւ և բուլղովի վերջ դրաւ մեր գոյութեան, իսկ գաղութները, թեև տարբեր իրենց գործունէութեան եղանակով, աչքառու աշխատանքներ կատարած են իրենց շրջաններու մէջ:

Գաղութներու աշխատանքի այս դրական պատկերէն մոտ աչքի զարնող երևոյթ եղած է այն, որ շատ անգամ միջավայրի ազդեցութիւններու և պայմաններու բերումով մէկ շրջանը միւսէն տարբեր հայեցողութիւններով երևան եկած է: Այս առիթով կոնֆերանսին մէջ տեղի ունեցան երկար վիճաբանութիւններ և որոշեցաւ միջոցներ ձեռք առնել ներդաշնակութիւն պահելու համար կուսակցական բոլոր շրջաններու աշխատանքների միջև:

II. Բիւրօ.

Բիւրօի օրեկտիւս և շատ կետերու մէջ ինքնաքննադատ գեկուցումին շուրջ մտքերու երկար փոխանակութիւններէ յետոյ, որոնց մասին, անշուշտ, ամէն շրջան մանրամասնութիւններ կիմանայ իր ներկայացուցիչներէ, անցաւ հետևեալ քանաձևը.

Հ. Յ. Դ. խորհրդաժողովը, լսելէ յետոյ Բիւրօի մի քանի ընկերներու գեկուցումը Բիւրօի վերջին մէկուկէ տարիի գործունէութեան մասին, կարճաճառով.

Որ Հայաստանի Հանրապետութեան արդի ճգնաժամային կացութիւնը հետևանք է գլխաւորապէս այն ծայրայեղօրէն աննպաստ առարկայական պայմաններու, որոնց մէջ

հանրապետութիւնը կոչած էր զարգանալու, այն է՝ աշխարհագրական դիրք, երկրի աղքատիկ ու անհրապոյր վիճակ, դրացի ժողովուրդներու թշնամութիւն և մշտնջենական դաւ ու յարձակումներ, դաշնակից պետութեանց անտարբերութիւն, ռուս-բուշինիկեան իմպերիալիզմի ծաւալումն դէպի հարաւ, ելևնտական յուսահատ վիճակ, հայ երկրի հիմնայատակ աւերած, հայ ժողովրդի մտաւորականութեան ճարակում և ուժասպառումն իբրև արդիւնք վեց տարւան անդով պատերազմի և թուրք-բաթարական մասսայական կոտորածներու:

Խորհրդաժողովը միևնոյն ատեն կը նկատէ, որ Հայաստանի վարիչ մարմինը, ի դէմս Հ. Յ. Դ. Բիւրօի, պայքարելով այդ բացառիկ դժոխային պայմաններու դէմ, հնարաւոր չափով զարկ տուած է երկրի վերաշինութեան գործին:

Այս իրողութիւնը արձանագրելէ ետք, Խորհրդաժողովը պարտք կը համարի շեշտելու

1. որ Հ. Յ. Դ. Բիւրօն, լինելով հանդերձ երկրի դէ ֆակտօ ամենաիդիականաւոր վարիչ մարմինը, թէ՛ կառավարութիւն դառնալէ առաջ և թէ՛ մանաւանդ յետոյ, կանգնած չէ եղեր պատմական ծանր վայրկեանի բարձրութեան վրայ, որովհետև, սկսած IX-րդ Ընդի. ժողովէն մինչև 1920թ. ապրիլ ամիսը (մինչև կառավարութիւն դառնալը), Բիւրօն չէ աշխատած ստեղծելու կուսակցական ուժով կազմակերպութիւն,

2. որ 1920թ. ապրիլէն ի վեր Բիւրօն, փոխանակ դուրս մնալու, անցքերու վրա աչալորջ հսկելու, կուսակցական ուժերը վերակազմելու, գորքի ու ժողովրդի մէջ ռամկավարական սկզբունքները արծարծելու, հակառակ կանոնագրի և IX-րդ Ընդի. ժողովի որոշման, մտաւ կառավարութեան մէջ լքելով կազմակերպական շարքերը, ուր, իբրև հետևանք անտերութեան, սկսան զարգանալ կենտրոնախոյս ձգտումներ և ամէն տեսակ բացասական հակումներ,

3. որ Բիւրօն, իբրև ամբողջութիւն, կառավարական վարչական մեխանիզմը վարելու գործին անհամապատասխան մարմին էր,

4. որ Բիւրօն, դառնալով գերագոյն իշխանութիւն, թոյլ տուած է անիշխանութիւն նոյնիսկ իր ծոցին մէջ, որ չէ յարգած հաւաքական ու ներդաշնակ աշխատանքի սկզբունքը. այս կամ այն նախարարը կատարած է երբեմն ծանր պատասխանատու քայլեր ինքնագլուխ, նոյն իսկ հակառակ նախարարական խորհրդի որոշումներուն,

5. որ Բիւրօն չէ իրագործած Ընդի. ժողովի որոշումներու 7-րդ կէտը, որի համաձայն անմիջապէս պատերազմական նախարարութեան պիտի կոչէր Դաշնակցական անհատ, ի հարկին ոչ զինուորական իրականացնելու համար

IX-րդ Ընդհ. ժողովի որոշումները բանակի վերականգնության մասին,

6. որ մայիսեան օրերուն Բիրօի ձեռքով կազմակերպւած գորաշարժը բոլշևիկեան վտանգի դէմ, իրոք, մի հոյակապ ծեստ էր, որ պատիւ կը բերէ մեր կուսակցութեան, որ, սակայն, Բիրօ-կառավարութիւնը չ'կրցաւ պատշաճ կերպով տանել այդ գործը, որի համար բացառապէս ստանձնած էր դիկտատորութիւն և շարժումը ճնշելէ յետոյ անմիջապէս չհրաժարեցաւ իշխանութենէ:

Այս բոլորը ցաւով արձանագրելէ յետոյ Հ. Յ. Գ. Խորհրդաժողովը կորոշէ այս իրողութիւնները ներկայացնել X-րդ Ընդհ. ժողովի նկատառութեան⁶:

(Այս բանաձևը վերապահած է մնալու միայն կ. կոմիտէներու սեփականութիւն):

III. Մոմենտի մասին.

Հ. Յ. Գ. Խորհրդաժողովը, լսելով Բիրօի զեկուցումը կուսակցութեան ցարդ վարած արտաքին և ներքին քաղաքականութեան մասին, ինչպէս նաև լրացուցիչ զեկուցում պատիւ-րակութեան ներկայացուցչի կազմի և նկատելով՝

որ Հայաստանի մէկ մասը գրաւուած է բոլշևիկներու և քեմալականներու կողմէն, որ երկիրը տնտեսապէս քայքայած է և ժողովուրդը ուժասպառ, որ Սէվրի դաշնագիրը մերժած է թուրքերու կողմէ, որ անոր վերաքննութեան կողմնակից են նոյն իրենց դաշնակիցները, որ Լոնդոնի կոնֆերանսին կողմէ անորոշ «հոմ» ի⁷ մը առաջարկ է եղած թուրքերուն, որ յոյսերը Ամերիկեան և ուրիշ մանդատներու մասին ի դերն եղած են, որ դաշնակիցներու միջև թրքական խնդրին շուրջ անհամաձայնութիւն կը տիրէ, որ Թուրքիան և մանաւանդ Ռուսիան կոչւած են առաջնակարգ դեր խաղալու Հայկական հարցի վերջնական կարգաւորան մէջ: Նկատելով սակայն, որ Դաշնակիցները Լոնդոնի նոյն կոնֆերանսի մէջ անխախտ հռչակած են Միացեալ Հայաստանի անկախութեան սկզբունքը, որ, հետևաբար, Սէվրի դաշնագիրը ըստ էութեան փոխված չէ և տակաւին կը մնայ իբրև պատանդան Հայաստանի իրաւական գոյութեան, որ «հոմ» ի առիթով եղած որոշումը կարող է սոսկ առժամեայ բնոյթ ունենալ: Այս ամէնը նկատի ունենալով՝ Խորհրդաժողովը

հետևեալ որոշումները կընդունէ կուսակցութեան առաջիկային վարելիք քաղաքականութեան մասին.

1. Կանգնած մնալով Միացեալ Հայաստանի անկախութեան տեսակետի վրայ՝ ուժեղ թափով շարունակել պրոպագանդը և դիւանագիտական աշխատանքը մանաւանդ Ամերիկայի մէջ՝ իրականացնելու համար Սէվրի դաշնագրին այն յօդածները, որոնք կը վերաբերեն Հայաստանին:

2. Երկրի ներսը բոլշևիկեան իշխանութեան խստութիւնները մեղմելու նպատակով սահմանափակել միմիայն ինֆորմասիոն-կազմակերպական աշխատանքով՝ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան խնդիրը համարելով մեր մոտաւոր քաղաքականութեան զերագոյն նպատակը:

3. Երկրէն դուրս մտնել յարաբերութեանց մէջ Խորհրդային Ռուսիոյ հետ՝ նպատակ ունենալով օգտագործել անոր քաղաքական կշիռը յանուն մեր ազգային քաղաքական նպատակներու իրագործման:

4. Ընդունելով, որ ռուսական կնճռին բաղձալի կարգաւորումը կախուած է նաև ռուս-ռամկավար, սահմանադրական, ընկերվարական տարրերէն, աշխատել ստեղծելու սերտ մերձեցում այդ տարրերու հետ՝ ընդունել տալով անոնց Հայաստանի անկախութեան սկզբունքը⁸:

5. Համակրելով կովկասեան ազգութիւններու դաշնակցութեան (կոնֆեդերասիոն) գաղափարը, բայց և նկատելով, որ զայն իրագործելու պայմանները տակաւին հասունացած չեն, աշխատել սերտ կապ պահպանել վրացիներու, թաթարներու և լեռնականներու հետ:

6. Մարկ տալ համագործակցութեան ոգիին հայ ժողովրդի բոլոր կենսունակ ու շինարար տարրերու միջև՝ ստեղծելով այդպիսով մէկ և ընդհ. ազգային դիվանագիտական ճակատ:

7. Ուժ տալ արտասահմանեան պրոպագանդային այն բոլոր միջոցներով, որոնք յարմար կը դատուին կուսակցութեան վարիչ մարմիններուն կողմէ:

8. Պրոպագանդին տալու է պետական բնոյթ:

6 Յ. Յ. Դաշնակցութեան 1923թ. ապրիլ-մայիսին Վիեննայում տեղի ունեցած խորհրդաժողովում Բյուրոյի նյութ անդամներին լսելուց հետո, Բյուրոյի գործունեության վերաբերյալ ավելի մեղմ ձևակերպումներ ընդունվեցին, տես Քաղուածքներ 3. Յ. Գ. Արտասահմանեան մարմիններու արտակարգ խորհրդաժողովի որոշումներէն, Վիեննա, 1923, էջ 9-10:

7 Խոսքը Թուրքիայի «սահական տարածքների» արևելյան մասում հայկական «ազգային օջախ» ստեղծելու առաջարկի մասին է:

8 Տեքստում բաց են թողնված 2-4 կետերը, որոնք, սակայն, նույն ձեռագրով լրացված են (արխիվային գործի 5-րդ թերթը):

IV. Կիլիկիա.

Հ. Յ. Գ. խորհրդաժողովը Կիլիկիայի մասին նույն շրջանի կ. կոմիտեի ներկայացուցչին զեկուցումը լսել է այդ առիթով միաբերու փոխանակություն ընել է յետոյ կը յայտարարե, թէ Հ. Յ. Գ. Կիլիկիայի վերաբերմամբ չունի որևէ քաղաքական նպատակ, սակայն միս կողմէ, նկատի ունենալով Կիլիկիայի հայութեան ֆիզիքական կացութեան պահպանման անհրաժեշտութիւնը, որ անխտասափելիօրէն առաջ պիտի գայ թրքական լեժիմի վերահաստատման պարագային, կորոշէ.

1. Գեւ ըլլալ բնիկ Կիլիկիայի հայերու արտագաղթին ընդհանրապէս

2 Ի պահանջիլ հարկին միջոցներ ձեռք առնել՝ գաղթեցնելու ոչ բնիկ կիլիկեցի հայ տաւազիրները հարմարագոյն վայրեր

3. Ֆրանսայի աջակցութեամբ հետապնդել իրական հիմքերու վրայ դնել փոքրամասնութեանց շահերու պաշտպանութեան խնդիրը

4. Լայն չափերով զարկ տալ տեղական ինքնապաշտպանութեան գործին

(Այս բանաձևի որոշումներու մասը վերապահած է միմիայն կ. կոմիտեներուն):

V. Փարիզի պատիրակութիւն.

Հ. Յ. Գ. խորհրդաժողովը, լսելով Հանրապետութեան պատիրակութեան ներկայացուցչի զեկուցումը պատիրակութեան գործունեութեան մասին, գտաւ, որ Միացեալ Հայաստանի անկախութեան գաղափարի նիւրագործումը Սէվրի դաշնագրով կատարած է նաև հանրապետութեան պատիրակութեան թափած ջանքերու շնորհիւ, որ Հայաստանի համար ալիւրի և այլ մթերքների առաքման, ռազմամթերքի մատակարարման և շարք մը նման գործերու մէջ պատիրակութիւնը հանդէս է բերել իր գործուն մասնակցութիւնը՝ մինևնոյն ատեն նկատի ունենալով.

1. որ պատիրակութիւնը, նախ լինելով երկրէ հեռու և գտնւելով տեխնիքօրէն անբարար յարաբերութեանց մէջ իր կառավարութեան հետ, ապա չափով մը զիջումներու երթալով այսպէս կոչող Ազգային պատիրակութեան պահանջներուն՝ յանուն երկու պատիրակութեանց համագործակցութեան գաղափարի, կատարած է շարք մը կարևոր քայլեր իր պատասխանատուութեամբ՝ առանց պատշաճ հրահանգներ ստանալու իր կառավարութենէն (Բաթումի և Տրապիզոնի խնդիրները), կամ հակառակ անոր տրուած պարզորոշ ցուցմունքներուն (պաշտպանած է Կիլիկիան Հայաստանին կցելու խնդիրը)

2. որ էնֆորմասիոնի ու պրոպագանդի գործը տարել է անկազմակերպ ու պատահական եղանակով ու այդ պատճառով ինքը՝ պատիրակութիւնը, Հանրապետութեան դիա-

նագիտական ներկայացուցիչները և մամուլը անտեղեակ են եղեր միջազգային քաղաքական իրական կացութեան,

3. որ մեր ներկայ քաղաքական կացութիւնն անհրաժեշտ կողմնէ իրական լիազորութեամբ օժտուած դիւանագիտական մարմնի մը գոյութիւնը՝ շարունակելու համար հանրապետութեան արտաքին քաղաքականութիւնը, կորոշէ՝

1. Անհրաժեշտ նկատել Հայաստանի Հանրապետութեան պատիրակութեան գոյութիւնը:

2. Ուժեղացնել պատիրակութեան կազմը՝ հասցնելով իր անդամներու թիւը երեքի:

3. Հիմնել պատիրակութեան կից էնֆորմասիոնի և պրոպագանդի բիւրօ:

4. Մինչև պատիրակութեան՝ օրինական կառավարութեան հետ յարաբերութեանց վերահաստատումը դիւանագիտական և հիւպատոսութեանց ներկայացուցիչները կենթարկւեն պատիրակութեան, որ հարկ եղած պարագային կանանէ նորերը:

5. Պատիրակութեան և Հ. Յ. Գ. Բիւրօի փոխարարբերութիւնները տեղի կունենան համաձայն Հ. Յ. Գ. կանոնագրի 59 և 64-րդ յոդաձևներու ոգիին:

Խորհրդաժողովը, լսելով նաև պատիրակութեան ներկայացուցչի զեկուցումը Ազգ. պատիրակութեան մասին, ինչպէս նաև նույն պատիրակութեան նախկին մէկ անդամի տուած լրացուցիչ տեղեկութիւնները և նկատելով՝

1. որ հանրապետութեան պատիրակութեան հաստատել վերջ Ազգ. պատիրակութեան գոյութիւնը այլևս ոչ մէկ բանով կրնար արդարանալ՝ առաջ բերելով, ընդհակառակը, աղետալի երկութիւն մեր դատի պաշտպանութեան գործին մէջ,

2. որ, սակայն, դիւանագիտական մէկ ճակատ ունենալու նկատումով առժամապէս կարելի է հաշվի առնել Ազգ. պատիրակութեան իբրև գոյութիւն ունեցող Ազգ. դիւանագիտական մէկ ֆակտոր.

կորոշէ՝

Հրահանգել հանրապետութեան պատիրակութեան, որ ջանայ ապահովել համերաշխ գործակցութիւն Ազգ. պատիրակութեան հետ՝ հիմք ունենալով կառավարութեան կողմէ իբրև տրուած հրահանգները և ներկայ խորհրդաժողովի արտայայտած տեսակէտները:

VI. Պետական դրամներու և ասպանքներու խնդիր.

Հ. Յ. Գ. խորհրդաժողովը, լսելով արտասահման գտնուած զանազան հիմնարկութիւններու և պաշտոնական ու անպաշտոն ներկայացուցիչներու մոտ գտնուած դրամներու ու

ապրանքներու, ինչպէս նաև հանրապետութեան անունով ժողոված փոխանակութեան դրամներու մասին, եկաւ հետևեալ եզրակացութեան.

1. Հանրապետութեան սեփականութիւնը կազմող բոլոր տեսակի հարստութիւններու (դրամ, ապրանք և այլն) միակ իրաւագոր տերն է հանրապետական Արտասահմանեան պատվիրակութիւնը, որ և պարտաւոր է անյապաղ տէր դառնալ այդ բոլոր հարստութիւններուն՝ նախորոք քննելով հաշիւտու բոլոր հիմնարկութիւններու և անձնադրութիւններու հաշիւները:

2. Այդ նկատումով դիւանագիտական և այլ տեսակի բոլոր ներկայացուցիչներն անվերապահորէն հաշիւտու և պատասխանատու են պատվիրակութեան առաջ:

3. Այդ ձևով կենտրոնացած գումարները պատվիրակութեան մէջ եղող Դաշնակցականները խիստ տնտեսումով պիտի ծախսեն մեր քաղաքական ներկայացուցիչներու պահպանման, պրոպագանդի, էմֆորմասիոնի և գլխաւորապէս երկրին ներքին կարիքները բարարելու համար՝ միշտ համախորհուրդ Հ. Յ. Դ. Բարձրագոյն Մարմնի հետ (համաձայն կանոնագրի 59 և 64-րդ յոդածներու), ծախսելու մէջ հնարաւոր չափով ընդառաջ երթալով նւիրատուներու բաղձանքին:

4. Պատվիրակութիւնը պէտք է անմիջապէս մանրամասն հաշիւէլիտ կազմէ թէ՛ իր և թէ՛ մեր ներկայացուցիչներու ծախսերուն համար և պէտք է հսկէ այդ բոլորի անշեղ գործադրութեան վրայ:

5. Գալով փոխառութեան խնդրին՝ Խորհրդաժողովը կը գտնէ, որ պատվիրակութիւնը պէտք է ջանայ բանակցութիւններու միջոցով արգելք հանդիսանալ փոխառութենէ գոյացած գումարները տերերուն վերադարձնելու տրամադրութիւններու կիրառման և պիտի ստանա ու անձեռնամխելի պահէ այդ գումարները՝ սպասելով ապագայ օրինաւոր կառավարութեան: Եթէ այդ բանակցութիւններու ընթացքին երևան գայ վերոյիշեալ նպատակի իրագործման անհնարաւորութիւն, Խորհրդաժողովը կը գտնէ, որ այդ ժամանակ պատվիրակութիւնը ինքը չեղեալ պէտք է յայտարարէ փոխանակութիւնը կառավարութեան անունով՝ հրահանգելով վերադարձնել դրամները տերերուն.

(ի նկատի ունենալով, որ Խորհրդաժողովը այն իրաւասու մարմինը չէ, որ զբաղէր կուսակց. մարմիններու դրամական խնդիրներու քննութիւնով և ճշտումով, Խորհրդաժողովին ներկայացած հաշիւները աչքէ անցնեցան միայն ի գիտութիւն, իսկ անոնց քննութիւնը

ձգեցաւ X-րդ Ընդհ. ժողովին):

VII. Մամուլ.

Կուսակցական մամուլի նկատմամբ Խորհրդաժողովը որոշեց առաջարկել կուսակցական գերագոյն մարմնին՝ իրագործել IX-րդ Ընդհ. ժողովի որոշումը կուսակցական կենտր. օրգան հիմնելու մասին, որ առաջ կը բերենք նոյնութեամբ.

«Լսելով մամուլի մասին զեկուցում և նկատի առնելով այն հանգամանքը, որ կուսակցական մամուլը վերջին ժամանակներս զանազան պատճառներով յաճախ հանդէս է բերած անհաշտելի տարակարծութիւններ կարգ մը գործելակերպի խնդիրներու շուրջը, նկատի ունենալով և այն, որ այս փոխանցման շրջանին կուսակցական միակերպ քաղաքականութեան բացակայութիւնը մեծապէս կը վնասէ մեր վարկին և աշխատատեղութեան շահերուն, Ընդհ. ժողովը կ'որոշէ.

1. Հրահանգել Բիւրօին ամեն կերպ նպաստներով՝ կուսակցական մամուլի զարգացման, պարբերական և կանոնաւոր տեղեկատուութեամբ և ցուցումներով ղեկավարել մամուլը ընդհ. կուսակցական խնդիրների մէջ՝ վերապահելով նրան լիակատար ազատութիւն տեղական հարցերի մասին

2. Ունենալ մէկ կենտրոնական օրգան, որ լինելու է արտաշայտիչը Բիւրօի ուղղութեան և քաղաքականութեան

3. Ունենալ գիտական պարբերական մի օրգան, որ լինելու է «Դրօշակ» ը

4. Կուսակցական թերթերը պարտաւոր են պահպանել կենտ. օրգանի ուղղութիւնը և չ'չեղել հիմնական հարցերի մասին նրա բռնած դիրքից»¹⁰:

VIII. Էնտէրնացիոնալի մասին.

Էնտէրնացիոնալի մասին լսելով զեկուցում և միտքերու փոխանակութիւններէ յետոյ Խորհրդաժողովը կանգնած մնաց IX-րդ Ընդհ. ժողովի որոշումին վրայ, որ հետևեալն է.

«1. որ միջազգային աշխատատեղութեան յեղափոխական ընկերվարական կուռ բանակը միայն կրնայ վերջնականապէս խորտակել տնտեսական ու քաղաքական աշխատատեղութեան ոյժը,

2. որ ժողովուրդներու իսկական ու ամբողջական ազատագրումը կիրականանայ միայն բոլոր երկիրներու և ազգերու աշխատատեղութեան դասակարգային անողոք պայքարով, միջազգային միութեամբ ու համերաշխութեամբ,

3. որ Հ. Յ. Դ., իբրև միջազգային ընկեր-

9 ՅՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումների հրատարակված տարբերակում՝ «նպաստելով», տես Բաղուածներ 3. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, Եր., 1920, էջ 17:
10 Բաղուածներ 3. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, էջ 16-17:

վարական ընտանիքի հասար ու հարազատ անդամ, այսուհետև ևս պետք է սերտ ու անխախտ յարաբերություն պահպանե՛լ վերակազմելու համար ընկերվարական էնտերնացիոնալը¹¹, որ պառակտում ու կազմալուծում էր նաև ճողական պատերազմին հետևանքով և քաղքենի ընկերվարականներու դասալքութեան պատճառով»¹²:

IX. – Հ. Յ. Դ. Արտասահմանեան Պատասխանատու Մարմին.

1. Նկատի ունենալով Բիւրօի արտասահման անցած անդամներու կողմէ Խորհրդատու դովին եղած յայտարարութիւնը

2. Նկատի ունենալով նաև քաղաքական ներկայ կացութիւնը, որուն հետևանքով անհրաժեշտ կը դառնայ Բարձրագոյն Պատասխանատու Մարմնի մը գոյութիւնը արտասահմանեան շրջաններու համար

Խորհրդատու դովը կ'որոշէ.

1. իր վրա առնելով X-րդ Ընդհ. ժողովի առջև պատասխանատութեան իր բաժինը՝ կազմել պատասխանատու մարմին մը, որը Բիւրօական լրի իրատուքներով կը վարէ կուսակցական և քաղաքական գործերը մինչև առաջիկայ Ընդհ. ժողովը: Այդ մարմինը կը կրէ «Հ. Յ. Դ. Արտասահմանեան Պատասխանատու Մարմին» անունը:

Օանօք. ա. Ներկայ խորհրդատու դովի՝ Արտասահմանին վերաբերող որոշումներուն գործադրութիւնը կ'յանձնի Պատասխանատու Մարմին

բ. Պատասխանատու Մարմնի իրաւատութեան սահմաններէն դուրս կը նկատուին Անդրկովկասն և Պարսկաստանը

2. Պատասխանատու Մարմինը կը պահէ իր լիազորութիւնները մինչև այն ատէն, երբ Բիւրօն ինքզինքը ի վիճակի կը յայտարարէ վարելու քաղաքական գործերը նաև Արտասահմանի մէջ: Այս պարագային Պատասխանատու Մարմինը կը պահէ իր գոյութիւնը իբրև պատասխանատու կուսակցական արտասահմանեան գործերու՝ ենթարկելով Բիւրօին


3. Պատասխանատու Մարմինը կը լուծի, երբ Բիւրօի անդամներուն կազմը, ամբողջանալով արտասահմանի մէջ, ի վիճակի կը լինի ինքզինքը Բիւրօ յայտարարելու

(ի նկատի պէտք է ունենալ, որ այս բոլոր բանաձևերը ընդհանրապէս պէտք է համարել սեփականութիւն կ. կոմիտէների, իսկ բանաւոր և գրատր պրոպագանդի համար օգտուել պէտք է նոյն բանաձևերից բխող մտքերից):

Կոմիտէնան իր օրակարգն սպառելով՝ փակուցաւ ապրիլ 25-ին:

**Նախագահ
Անդամ-քարտուղար՝ (ստորագրութիւն)**

ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 277, ք. 1-12: Բնագիր: Ձեռագիր:



11 ՀՀԳ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումների հրատարակված տարբերակում՝ «էնթեռնասիօնալը», տե՛ս Քաղուածներ Գ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, էջ 21:
12 Քաղուածներ Գ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, էջ 21: